



**ՄՈՎՍԵՍԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐԵԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ  
ԹՂԹՈՅՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՌ ՀԱՏՈՒԱԾԵԱԼՆ  
ԳՐԻԳՈՐ ԵՐԵՅ\***

Այլ ճշմարիտ վարդապետութիւն է ոչ միակողմանի դատելի:

Սասացուք և զագգիս մերոյ թիւրութիւնն: Նախ՝ արտաքոյ եկեղեցւոյ զպաշտօնն կատարել, ապա զեկեղեցի և զառաջնորդութիւն ժառանգութեամբ ունել, զեկեղեցի վաճառել, զեկեղեցի Քրիստոսի դստեր բաժին տալ, ձեռնադրութիւն արծաթով առնել, նորակնքի և հիւանդի և մեռելի ձեթ ոչ օրինել, ի տօնախմբութիւն հեղգ գտանել օրինաց և առաջնորդաց անհնազանդ լինել, յազգապահութիւն խոտորել, յերդուն և յիշոց յաճախել և այս զոր դիցուք ասու:

**ԲԱՆՔ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԽՈՍՀՈՎՈՒ ԱՌ ՆՈՅՆ.**

Տեղի աղօթից գիրք սուրբ զեկեղեցի մեզ ուսուցանէ, որ առաւել լսելի լինիցին աղօթք, զի եթէ ի հնումն Սողովմոնի տաճարին Աստուծոյ զիւրաքանչիւրոցն զհայցուածն լնով և առնով լուսայ: Եւ Դափթ ինքն գլխովին ի տաճարին զլսել խնդրուածոցն իւրոց հայցէր. «Էւր Տէր ձայնի խնդրուածաց իւրոց, յաղաշելինն առ Քեզ, ի համբառնալ ձեռաց իւրոց ի տաճար սուրբ քո»<sup>15</sup>: Եւ նսայի ասէ. «Տես ի տաճարէ սրբյ քումնէ և ի փառաց քոց»<sup>16</sup>: Եւ այն զի անդ սեղանն զանանց արինն մատուցանէր պատարագ, ապա ո՞րչափ գերակայ է օգտութիւնն որ ի նորումն ի տան Աստուծոյ զաղօթս մատուցանէլ առաջի նորա, յորոյ վերայ արինն անարատ Գառինն Աստուծոյ դնի պատարագ: Վասն այնորիկ և սուրբ կոչէ, զի սրբոյն Աստուծոյ է բնակարան և հրեշտակաց սրբոց բանակետդ, և արդարոց կատարելոց տեղի

\* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1875 թվականի № Ա-ից:

<sup>15</sup> Սաղմ. Իշ. 2:

<sup>16</sup> Նսայի ԿԳ. 15:

իշեանի՝ յերկնուստ յերկիր երթևեկութեան: Քանզի ի սմա ամենայն ի բաց բարձեալ՝ լինի կրծիմն: Եւ երկիրս ընդունի զերկնայինսն, և երկնայինքն միանան ընդ երկրայինքս, և ննջեցեալ սուրբքն ընդ հաւատացեալ կենուանիս, զի եթէ հաւատամք եթէ տուն Աստուծոյ և բնակարան է եկեղեցի, որպէս և ինքն իսկ ասաց: Եւ զի՞նչ է կաթողիկէն տիեզեռական, զի ամենայն եկեղեցիք ողղափառաց որ ընդ տիեզերս են, Մի են, Մի Քրիստոս յամենայն եկեղեցին է, որ ըստ առաքելոցն հաւատոյ շինի, զոր և առաքելական կոչեմք: Որ զի թէ բաժանին ըստ տեղեաց, այլ ոչ թէ ըստ ժողովրդոց: Զի ի ծագաց մինչև ի ծագս երկրի ուր և հասանիցք ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցին ողղափառաց իր եկեղեցին է, և ոչ որոշէ զնա ոչ աշխարհն և ոչ լեզույն օտարութիւն: Այլ ընդունի որպէս մայր ի գիրկս սաստիկ սիրով: Եւ ապապէս ամենայն ուրեք տիեզերական կոչի, վասն տիեզերաց հաւատացելոց զդրուն բանալոյ և զգիրկս սփողելով: Եւ արդ տես քանիան զբարեացն ունի լինել առիթ: Երկնայնոցն\* դարձեալ ասեմ, սա է տեղի հանդերձ երկնաւոր բագաւորան ազգակցաց մերոց սրբոց ի սմա: Ընդ մեզ է խառնուն ամենայն հաւատացելոց որ յամենայն երկրի սա է մայր: Մեղացն մերոց և մերոց ննջեցելոցն աստուստ է քաւութիւն, նորիրաց և պատարագաց մերոց առաջի Աստուծոյ աստ լինի դրութիւն: Ի սմա զԱստուծոյ որդիանալն վերստին ծննդեամբն ստանամք: Ի սմա կերպարանիմք զանմահարար և զանապականագործ կերպարն և որով ընդ Քրիստոսի միանամք: Սա է սանդուխք յերկրէ յերկինս վերելութեան: Եւ եթէ զիսաշելութիւնն Քրիստոսի և զգերեզմանն բաղձամք տեսանել, աստ զիփափաքն լնումք: Քանզի ուր պատարագի Քրիստոս, անդ է խաչելութիւնն, և ուր մարմինն սուրբ առանց մարդկային նորագուցն ցուցանի, անդ է գերեզման նորին և ուր մեռելութիւնն մեր կենդանանյ, անդ հաւատամք կենդանութեան Որդույն Աստուծոյ: Զի թէ և մահու նշանակէ հացն և բաժակն, այլ կենդանի և կենդանարար է, զի ինքն ասաց. «Այս է հացն կենդանի, որ յերկնից իշեալ է»<sup>17</sup>: Բայց վայ ինձ և վայ այժմու ժամանակին, որ ըստ մարգարէին կանխասացութեանն օտարացաք ի մօրէս և յայս չափ պարզէ զմեզ օտարացուցաք: Զի թէն

113ա այլ ինչ չունեաք յանցումն, այս միայն բառ/կան էր մեղաւոր առնել զմեզ: Քանզի և աստանօր մարգարէս ոչ վասն այլ իրիք, այլ վասն ի հոգևոր մօրէս օտարանալոյ կոչեաց մեղաւորս. «Օտար եղեն, ասէ, մեղաւորք ի մօրէ խարեցան յարգանդէ»<sup>18</sup>, այսինքն յաւազանէն: Քանզի վրիփին ի շնորհէ օտարացեալքն յեկեղեցոյ և ատեցեալ լինին իբրև զիտրոս, վասն զնովս արհամարհանացն: Եւ զի՞նչ է խօսեցան սուս, զի ասեն. «Երբէ սիրելի են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ և փափագէ անձն իմ ի զափիթս քո»<sup>19</sup>: Եւ դարձեալ ասեն. «Զմի խնդրեցի ի Տեառնէ, և զոյն աղաշեմ բնակել ինձ ի տան Տեառն զամենայն առուս կենաց իմոց»<sup>20</sup>: Եւ դարձեալ՝ «Ուրախացայ ես որք ասէին ցիս ի տուն

\* Զնոպրում՝ երկնայնոցն:

\*\* Զնոպրում ք:

<sup>17</sup> Յովհ. Զ 50:

<sup>18</sup> Սաղմ. Ծէ 4:

<sup>19</sup> Սաղմ. ԶԳ 1:

<sup>20</sup> Սաղմ. ԻԶ 4:

Տեառն երթիցուք»<sup>21</sup>: Զայս, և որ սոցին նման ասեն և մեծապես ստեն: Զի ախորժելի համարին յատաշիկայ ծողովիլ զժղովուրդ Աստուծոյ, քան քնակել ի տուն նորա: Ո՛՛ գործոյն և ողբումն գործելեացն եկեղեցիք Աստուծոյ խրթնացեալ և ծողովուրդք ի նոցանէ քեցեալ: Ըստ կամաց որ և լայ ինքեանց հաշուեսցին անո, զեկեղեցոյ զիտան տան և որ ևս դժնդակն, զի ոչ Աստուծոյ, այլ մարդկան զնորա նմանին պաշտօն: Զի առ աւագո գեղիցն ի պաշտօն ժողովին, ոչ Աստուծոյ, այլ նոցա պաշտօն տանել, որպէս թէ գերագոյն նորա քան զԱստուծ իշեն: ԶԱստուծոյ տամբք զանց արարեալ, զնոցա տունան նախամեծար ստեն: Որոց ի դէա եր ասել զուրունական քանն: «Երթալք տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»<sup>22</sup>: Թէ որ ինչ ասագացն անդ եր պատույ, զայն յատաշագոյն տարայք տունս, և դուք զպաշտօնն Աստուծոյ յԱստուծոյն պաշտեցէք տան մարգարեին հաւանեալ թէ՝ «Աստ օրինեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր»<sup>23</sup>: Թէպէս և թագաւոր եր, գիշերին երթեալ ի տուն Տեառն և այլոց ձայն տունեալ հրամայէ, թէ ծառայ եք, ասէ, Տեառն, առ տէրն ձեր եկայք և ի տուն Տեառն ձերոյ: Եւ «մի պատճառէք գիշերա, այլ ի գիշերի համբարձէք զձեռու ձեր ի սրբութին և օրինեցէք զՏէր»<sup>24</sup>: Եթէ ծառայ եք Տեառն, մի ընդդիմանայք կոչման Տեառն ձերոյ, ապա թէ կոչէ և ոչ զայք, չէք նորա ծառայք: Մարգարեին կոչէ Աստուծ և դու չանսաս, ապա ուրեմն և պաշտօն կոչողին առ ի քէն չէ համելի: Թէ ունկնդրութին լայ է քան զպատարագ ի վերայ ամենայն պատճառաց զոր ասացաք, վասն քարոզի քանի իմանալի է և այս: Զի քան հայցեալս որ ասես զգալն ի սուրբ եկեղեցի, իմասցուք թէ չէր հնար առաջնորդացն յայլ տեղին համարձակել ի պաշտօն միաբանութեան, բայց միայն ի սուրբ եկեղեցին: Այսորին բանք սրբոյն Խոսրովու:

Դիոնիսիոս Արիսապագին գրէ. «Երախապիցն ձէթ օրինել և օծանել և ապա մկրտել: Եւ ով իշխէ ասել, զի զմեզ ձաղակոծեն յառնել, և հոռոն անոն կարդան ի վերայ մեր, և անհիմասոք յոլով եավերեն զմեզ»: Սուրբ Գրիգոր Լուսատորիչն մեր հրամայէր. «Յերեսն սատունայի թքանել հրամարելցն: Զեյն և Բագարատ արար, աշակերտն Պետրոսի առաքելոյն, և այժմ թէ յիշենք՝ նորաձևութին կոչեն: Թողում ասել և զերին փշումն ի նորակնքիսն», զոր Գրիգոր Աստուծաբան ասէ ունել ի քան իր: Եւ առաքեալն Յակովովո գրէ. «Հիանքանացէ» որ ի ձենք, կոչեսցէ զերիցուն եկեղեցուն և արասցեն աղօթս վասն նորա, օծեն իդով յանոն Տեառն և աղօթքն հաւատով ապրեցուցանէ զաշխատեալն և թէ մեղս ինչ իշէ գործեալ՝ թողդի նմա»<sup>25</sup>: Յայտ արար թէ իշէ հիանդութին որ ի մեղաց լինիցի և մեղաւրացն օծութիւնն ոչինչ օգուտ է, այլ մարմնական ցաւոցն: Խսկ մեղացն խոստվանութիւնն և պաշխարութիւնն է թժկութիւն:

Հայք զիիանդն ոչ օծանեն և յոյնք զառողջ օծանեն:

<sup>21</sup> Սաղմ. ԺԻԱ. 1:

<sup>22</sup> Սաղմ. ԺԲ. 17:

<sup>23</sup> Սաղմ. ԺՂԿ. 1:

<sup>24</sup> Սաղմ. ԺՂԿ. 2:

\* Զեւագում՝ նորակնքիսն:

<sup>25</sup> Յակ. Ե 14—15:

Նրկոքին զարտուիլի են ճշմարտութեանն, զի թէ մարմնով առողջ է, ոչ ասէր թէ կոչեսցէ զերիցուն եկեղեցւոյն, այլ ինքն անձամբ գնայր յեկեղեցին և խոստվանէր զինգույն հիւանդութիւնն, այլ յայտ է թէ զմարմնոյ ասէ հիւանդութիւն և ոչ հոգույ: Վասն որոյ պարտ էր հայոց և յունաց զմարմնով հիւանդն օծանել ըստ Առաքելոյ, և հոգուվ հիւանդացն խոստվանութեամբ և ապաշխարտութեամբ տալ դեղ բժշկութեան: Զի ճշմարտութիւնն հաստատէր և զստութիւնն խափանէր, որպէս ի գալ լուսոյ հալածի խաւար և անյայտ լինի որ է իրաւացի: Եւ վասն մեռլոցն օծութեան դարձեալ գրէ Դիոնիսիոս աշակերտ սուրբ առաքելու Պողոսի, զի պարտ է օծանել// խորիրդարար: Զի որպէս ըմբիշ ոք նախ օծանեն և ապա ի մարտ պատերազմի դէմ ախոյանին հանեն, զի անըմբունելի լիցի ի թշնամոյն և տնել կարասցէ հարուածոցն: Ըստ այս օրինակի է առաջին օծութիւն քրիստոնէին առ աւազանան, զի ընդ սատանայի ի մարտ եկանէ քրիստոնէացն, զի պատրաստ լիցի և կազմ և յաղթել կարասցէ և զի մկրտութիւն աւազանին խաչակցութիւն է ընդ Քրիստոսի: Վասն որոյ զսուրբ միոռոնն նախ խաչանիշ արկանէ քահանայն յաւազանն և ապա զմանուկն մկրտէ: Եւ երիս ընկղմումն մանկան ի ջուր աւազանին զմեռելութիւն Քրիստոսի և զերեքօրեայ թաղումն նշանակէ, ըստ երանելի առաքելոյն Պողոսի որ ասէ. «Հին մարդն մեր խաչակից եղև նմա»<sup>26</sup> և «թէ թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ»<sup>27</sup>: Դարձեալ զի յետ մարտին զմբիշն ի բաղանիս տանին և օծանեն ի հանգիստ և յուրախութիւն: Ընդ որս և զյաղթանակ մարտին ընկալեալ, զուարճացի պայճառապէս և անուն քաջութեանն կայ մնայ առ յապա: Սոյնպէս և ի ժամ վախճանին՝ լուանան և օծանեն զգինուրն Քրիստոսի և դնեն ի քնարանի ի հանգիստ ակն ունեղով բրարինին վերևոյ ի միւս անգամ գալաւեանն Քրիստոսի, յորժամ իրաքանչիւր ոք առնուցու վարձ ըստ վաստակոց ի բարի ի Տեառնէն:

Խոկ վասն Զատկին Ծրագալուցին՝ յերեկոյն շաբաթուն ասէ աւտարանագիրն, որով յայտ է, թէ խոր երեկոյ էր և չէ պարտ յարկի արձակել զպատարագն, այլ աստեղովք և ճրագով, որպէս անունն ճրագալոյց է: Եւ յայսմիկ ո՞րպէս սուս են յոյնք, զի պահք քարոզեն թէսէտ մինչ յերեկոյ պահեն: Սուս են և հայք, զի յարկի լուծանեն, զի նոցա լուծանել պարտ էր և սոցա պահել մինչև յերեկոյ ըստ պատշաճի որպէս օրէն է: Եւ գիրք սուրբք վկայեն, որ են քանոն հաւատոյ և ոչ ըստ մարտաչելոյ կոչուել վարդապետս և իրաքանչիւր ախորժակաւք վարին անհնազանդութեամբ և անձնահանութեամբ:

Այլն եկեղեցի Քրիստոսի արեանն է գին, որպէս երանելին Պողոս գրէ. «Ոչ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցայք, այլ պատուական արեամբն Քրիստոսի»<sup>28</sup>: Եւ գիտել պարտ է, զի հոմանուն է կոչումն եկեղեցոյ: Քանզի ասի՞ հաւատացեալ ժողովուրդ եկեղեցի յորչորչի հոմանունաբար, և ի քարանց և ի փայտից շինեալը՝ եկեղեցի: Եւ է սա ընդհանուր և բացարձակ անուն, և չէ պարտ փակել ընդ ումեք իշխանութեամբ և ոչ վաճառել և ոչ բաժին տալ դստեր և ոչ վարձուք դրան քահանայ պահել անսրժան քահանայի և ուտել զեկեղեցի: Այլ

<sup>26</sup> Հոռմ. Զ. 6:

<sup>27</sup> Հոռմ. Բ. 12, հմտ. Կողոս. Բ. 12:

<sup>28</sup> Ա. Պետրոս Ա. 18—19:

տրժամ ընկեցի ի քահանայութենէն, արտաքս եղէ և եկեղեցոյն թէ և ինքն անձանք է շինեալ գեկեղեցին և կամ նախնիք իր: Զի սրբութիւն սրբոց վայել է: Նոյնպէս և թէ ի հերձուածութիւն ոք անկանի, չէ արծան ունել գեկեղեցի, զի թէ որ գործով ապականի անարժան է սրբութեանցն, ո՞րչափ ևս առաւել որ ի հասան թերի գտանի: Եւ զի գրեալ իսկ է՝ զմելու ժողովրդեանն կերից քահանայն, և հանցաւոր քահանայ զմեղաւոր ի մեջու ոչ կարէ ուտել: Զի երբ ինքն բարեխօսի կարօւ է, այլոց զիա՞ռո՛ կարէ միջնորդ լինել, զոր օրինակ շուր զիսու ոչ այրէ, այլ աճեցուցան և սնուցան, այսպէս և յանցաւոր քահանայ, ոչ միան թէ ոչ քակ զմելու ժողովրդեանն, այլև առիթ լինի մեղաց և յորդորէ ի մեջու զժողովրդին: Կոյր կորի 〔ոչ կարէ〕 առաջնորդել. երկորին անկանին ի խորհուրաս ստուգալս, ըստ գրոց բանի: Վասն որոյ պարտ է քահանային հրով հոգոյն նախ զինքն մաքրել և ապա զալցոն ուտել զմեղու և ծախել հրով Աստուածայնով\*: Զի քահանայն մաքրող թարժմանի, զի մաքրեցէ զմելու ժողովրդեանն սրբաւեր վարուք և մաքրափայլ աղօթիւք: Եւ ըստ այլ տեսութեան հայր սահ քահանայն զի հայրաբար խնամարկեցէ որդիացելոցն զնոցին պակասութիւնն ինքնան համարելով, և իբրև անձին հոգ տանելով, որպէս զի համարս տալոց է ընդ ամենեցուն առաջի Աստուծոյ: Յաղագ այսորիկ եկեղեցի Աստուծոյ ոչ է ումեր սեպհական ժառանգութիւն, այլ ճշմարիտ քահանայից, որք բարուք պաշտիցեն: Եւ գիտել պարտ է, զի զժողովրդին քահանային պարտ է անուանել ով ճմարիս իցէ և ոչ եկեղեցոյ: Քրիստոնէին ոչ է օրէն զքրիստոնէն//ծառայ պահել կամ վաճառել, այլ իբրև զեղքայր սիրել և ընդունել, զի՞նչ տայցեն պատասխանի որք զանդամարն Քրիստոսի դստեր բաժին տան կամ արծաթոյ վաճառեն, զի որպէս ասէ երանելի առաքեալն Պողոս, Քրիստոս հարսնացոյց իր գեկեղեցի և որպէս այրն և կինն մի մարմին է, այսպէս Քրիստոս և եկեղեցի մի է և յորժամ եկեղեցի վաճառի, Քրիստոս ընդ եկեղեցոյն վաճառի: Եւ զո՞ր ներել թողովթեան ունիցի որ զՔրիստոս վաճառէ, կամ դստերաց պոյ\*\* գուայ: Կամ կարէ՝ ասել այնպիսին, թէ քրիստոնեայ իցէ կամ քահանայ՝ եկեղեցավաճառ և աստուածավաճառ լինելով:

Ո՞ր դիցուք և զայնուիկ, որք զսիմոնեան ախտն ախտանան, կուրութեամբ մտաց և ափշովթեամբ սրտի, և որք զին առնուն զմեղու թողլով և կամ որք զհաւասու վաճառեն: Որպիսի՝ գեհենն զնոսա ոչ այրէ: Քրիստոս ձրի եթող զմեզ աշխարհի և դու զին առնուն և վաճառեն զպարզկան Աստուծոյ: ԶՀոգին բաշխեան Տէրն առաքելոցն առանց կաշառոց ի վերնատանն: Եւ դու արծաթոյ վաճառեն զշնորհս Հոգոյն սրբոյ, «Որք ի Քրիստոս մկրտեցայր, զՔրիստոս զգեցայր»<sup>29</sup>, ասէ անալուն ընտրովթեան Պողոս, և Հոգին Սուրբ աներևութարար ստուգապէս իշանէ ի շուրս աւազանին և դու անզգամիս արծաթոյ վաճառել զՈրդի զՀոգին Սուրբ Աստուծոյ: «Սուրբ կերպյ, ասաց Տէրն, այս է մարմին իմ»<sup>30</sup>, և առաքեալ մաքրովթեամբ ասէ մերձենալ և դու զի՞ն մարմնոյ և արեան Տեառն պահանջես: Եւ կարծես թէ չե՞ս Ցույս մատնիչ Քրիստոսի, կամ ի խաչանանուաց Տեառն: «Ըստեսցին ընտեսեալըն

\* Զեռագրում Աստուածայնով:

\*\* Զնոպիլը անընթեռնելի, ցեցակիր է:

<sup>29</sup> Գալատ. Գ. 27:

<sup>30</sup> Մատթ. ԻԶ. 12:

արծաթով»<sup>31</sup> ասէ մարգարէն, և գիրք սուրբը նպովեն զտուողն և զառ աղճա արծաթոյն: Եւ դուք կոկեալ և փերնետեալ պարեգոտիք կամիք արծաթանալ: Մի՞թէ դու ունիս իշխանութիւն զՀոգին տալոյ զի վաճառես զՀոգին: Կամ դու, որ առնուս զպարգն Աստուծոյ և չես արծանի, յարծաթն ապահնիս իբրև զՄինոն մոգ և կախարդ: Թէպէտ և արծաթասէրն ոչ ասէ՝ արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուտ վասն իրոյ ախտին, այլ երկոքին ի միամին պատժիք: Նա զի վաճառեաց զշնորին և դու զի զպարգն Աստուծոյ համարիս ընչիք ստանալ՝ երկոքին պատժապարտ գտանիցիք: Ոչ լուայք ի գրոց սրբոց, զի ասէ: «Ոչ որ զանձն ընձայեցուցան!», այլ զոր տէր ընձայեցուցան!»<sup>32</sup>: Մովսէս զԱմարոն եղբայր իր ոչ իշխանաց համարձակեցուցանել ի քահանայութիւն, առանց Աստուծոյ հրամանին, և ոչ ինըն Ամարոն համարձակեցաւ մատչել մինչևն ի Տեառն կոչեցաւ: «Վաղվաղակի յուրոք վերայ ձեռն մի դնէր, Տիմոթեայ Պողոս պատուիրէ, և մի լինիր, ասէ, կցորդ մեղաց օտարաց»<sup>33</sup>: Եւ դու առանց քննելոյ արծաթսիրութեան կալեալ ախտի մատնես զշնորի Տեառն Աստուծոյ տալով յանարժան: «Վասն որոյ գա, ասէ, բարկութիւնն Աստուծոյ ի վերայ որդոցն անհնազանդից»<sup>34</sup>, պատուիրանին Տեառն, որ է ահագին լոյժ:

Ալսոքիկ հայոց թերութիւնք և որ սոցին գոն նմանք: Եւ երանի թէ գոյր հնար բժշկել զԲիհանութիւնն զայս: Զի շղուականք տիրեցին շնորհաց և որք թէատրոնից գոնէ արծան ոչ են աթոռոց, օրինադիրք և կանոնոք կարգեցան կրօնից: Զմդուկս քամել և զույսու կլանել<sup>35</sup> և զգերան առ շիդ ոչ փոխանակել, գործովք ապականեալք և հաւատովք ոչ յաւէտ փոյթ առ ճշմարտութիւնն ունել: Վասն որոյ Յուդայ և Սամարիայ միապէս մոլորեալ ուոկանի ախտի ծառայել, միայն առ միմեանս մեծարանեկով՝ Ես պատուեան, Ես ապալուեան և ոչ մի ով իիք ի ճշմարտութեան ծառայեալք, ոչ ոք սիրով զօրացեալ, ոչ խոնարհութեամք բարձրացեալ, ոչ հեղութեամք պայծառացեալք, ոչ զմիմեանս լաւ քան զանձինս համարեալ, այլ անձնահաճ, ինքնահաճ, ինքնօրէն ամենեքան, ինքնասահման, ինքնականոն, սիրեցաք զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ: Եւ փոխեցաք զԲահիտենականն ընդ առարիսն և զԲանակերծեալ կենացն վայելսն ընդ աստեացս երազականի: Վասն որոյ գիրք սուրբ զմեզ յանդիմանեն և ի մարդկանէ եպերան կրեմք և վայի եմք արծանի զի վասն մեր հայիոյի անունն Աստուծոյ:

Երանելի առաքեալ ըստ քաղաքաց քաղաքաց կարգեալ եպիսկոպոս և մի հրամայէ լինել եպիսկոպոս և ոչ երկու: Եւ այժմ տեսանեմք վաղվաղակի զյուլովս, զի վասն սիմոնեան ախտին և յուղայեալն արծաթոյն զագգայինս իրաքանչիք կենդանութեամք միոյն զմիւն առընթեր կա-

<sup>31</sup> Սաղմ. Կէ 31:  
<sup>32</sup> \* Զեռագրում ընձայեցուցան:  
<sup>33</sup> Բ Կորնթ. Ժ 18:  
<sup>34</sup> Ա. Տիմ. Ե 22:  
<sup>35</sup> Ա. Տիմ. Ե 22:  
<sup>36</sup> Մատթ. Իգ 24:

քաջ հովուին ժառանգեցին, որ զանձն իւր եղ ի վերայ հօտին, զորոյ պարտին զննանութիւն յինքեանս բերել որք հովիր կարգեցան բանաւոր հօտին Քրիստոսի: Խոկ նոքա զայսակի թողեալ պողոտայ և զշանափառ ճշմարիտ հետևման հետոց քաջ հովուին, զարտուղին գնան ճանապարհ ըստ ձախողակի ընթացից: Փառամոլք և արծաթաւերք եղեալք, կաշտավերք\* և թիւրայատք, ձիաբոյդք և անասնապարարք, զինեւերք և արքեցոյք, հարեալ սիրո զագահութեան, կրկնամեռք ըստ ներքին և արտաքին մարդոյն, առաջնորդելով ժողովրդեանն ոչ յարդարութիւն, այլ ի կորուատ և յապականութիւն, ի գայթակղութիւն և ի դատապարտութիւն: Ըստ որս առաւել հեշտացեալ ուսմիկ ժողովորդ, իբրև զվեմ զատիկայր հողովեալ, զանցուցանն ի չարութիւն և ի ճշմարիտ կոչեցեալ դժուարին և հրաժարեն: Թէ զալլոց քրիստոնէից զողութիւն ոք ի մէնց բերել և ճանանձատք այնմ յորդորէ լինել զինել զինքեանս սուրբ Գրիգորոյ հաւատովն ասեն և ջատագով նմին քարոզեն: Ապա թէ զմերն ոք ստիպէ պինդ ունել զբարի, և մի յալլոցն խոտորել հեշտութիւն և յանկագութիւն, այնմ ընդդեմ բերել հակառակին ասելով՝ նոքա շեն միթէ քրիստոնեալք և աստուածապաշտք: Ուր նոցայն, ասեն, երթիցէ հոգի, եղիցի և մերս ընդ նոսին: Եւ զայն ոչ կարեն իմանալ թէ ոչ եղիցի այնպէս, այլ ի մէնց հեռանան և ընդ նոսին ոչ դասին, զի հաւ որ յերամէ եղանէ, մոլորական շրջի, և քար որ ի կարգէն ուստոն, յայլում վայրի զտեղի ոչ սուսու, այնպիսի պարտ է իմանալ որք սակս մարմնոյ հեշտութեան ի փոփոխումն յօժարին, թէ ի մէնց հեռանան և ընդ այլ քրիստոնեալու ոչ դասին: Զի Աստուած պահանջէ ի մարդոյ զհաւատ, զոր յաւազանն առեալ, թէպէս մի Քրիստոս և մի Տէր և մի մկրտութիւն, այլ ըստ ասհմանի լեզուին և գրոյն զագահանութիւն կարգին պահանջէ, զի թէ յառաքինութենէ յառաքինութիւն և զօրութենէ: ի զօրութիւն փոփոխէր ոք գոյր պատճառին չխօսից և տեղի բանի յառաք բերելոյ հայթայթան և կարծի տալ մարդկան երկեղածութեան:

Խոկ կտէ վասն մարմնապաշտութեան և զմարմինս պարարելոյ և զորովայն խճողելոյ և աստուածուցանելոյ, զր՞ո պատասխանի ունին տալ առաջի մարդկան կամ Աստուծոյ: «Զի որ սերմանէ ի մարմին, ասէ առաքեալ, ի մարմնոյ աստի հնաձէ զապականութիւն»<sup>36</sup>: Եւ վասն այսուրիկ պարտ է զարհուրել և դողալ, զի թէ խորհրդոց և բանից քննութիւն է, որպէս և է ճշմարիտ, ապա ո՞չափ ևս առաւել գործով մեղուցելոց, որոյ սաստիկ է պատիժ պատուասին և մարդիկ թէ մինեանց մեղանչեն, վրէժիսնորութիւն է յԱստուծոյ: Ապա ո՞ր ներել թողութեան կայցէ յորժամ զօրէնս Աստուծոյ ոք արհամարիէ և ընդդեմ Տեառն ընդվելալ հակառակիցի: Ազգս հայոց առին ի յունաց զվիսութիւն և զյանցնութիւն, ի Ֆունկաց՝ զմկնակերութիւն յատորս պահոց և զգինըմպութիւն, յատորց՝ զանիոյթ առնել զիսոստվանութենէ և զմկնանկ և զշանյազածի օրինութիւն, զոմանց թողլով զպահոց պնդութիւն և զջերմ ի հաւատս լինել զկիսոց անիոյթ արարեալ զմկնազնդութիւն եկեղեցւոյ և եկեղեցականաց, զոմանց ոչ զմտաւ ածել զտօնասիրութիւն և զյորդումն աղօթից, զոր յամենայնէ ի բարոյ հեռացաք ատելով զօրուտն և զշարն սիրեցաք: Նա և զի՞նչ է պարտ ասել և զատելութիւն և զմախանձ և

\* Զեռագրում՝ կաշտավուոք:

<sup>36</sup> Գալատ. Զ 8:

գկայենի եղբայրսպանութիւն։ Ոչ միայն զմարմին, այլ և զինգի չառապէս նենգութիւն։ Եւ թէ Նոյեան դպրուն ջրհեղեղն ոչ ողողէ զմարմին մեր, կամ սոդոնական հոր կիզէ, բնա ոչ ածեմք զմտա, թէ հեղեղ մեղաց զինգի մեր խորասովէ և հոր ցամանան տոշորէ։ «Որ հայի ի կին մարդ, ասաց տէրն, ցանկութեամբ, նոյն ժաման պրտի շնացաւ»<sup>37</sup>, և «որ բարկանայցէ տարապարտուց ի վերայ եղքօր, պարտաւոր լիցի գենեն հրոյն»<sup>38</sup>։ Եւ տեսցոր\* թէ ո՞վ գտանի ազատ յայսցանէ և կամ ո՞վ պարծեսցի ունել սիրտ սուրբ առաջի Աստուծոյ, ըստ հրամանի գործ սրբոց։

Նաև զայսցանէ ոչ է պարտ զանց առնել, քանզի յեթն առորց զոր արար Աստուծած, զատոյց ար մի յասոնկ և սեպհական ինքեան, զի 115ա պարապեսցեն մարդիկի//յամենայն հոգոց մարմնականաց և խոսովանութեամբ և ասպաշիարութեամբ արժանի լինին թողութեան մեղաց, և հաղորդութեան մարմնոյ և արեան Տեառն։ Իսկ յայնմանէ բազմապատիկ ևս զրկէ բանարկուն, և մեծամեծ չարեաց արար զնոյնն պատճառ, քանզի յայն առոր հնարեցաւ կարգեալ զվաճառաշահութիւն, յորում առաւել գայթագին մարդիկ ի մեջս բազմապատիկս, ի սուս ասել, ի զրկել, ի նենգել, յիշոցել, ի սուս և յիրաւ երդնով, յարքեցութիւն, ի պոռնկութիւն, ի սպանութիւն, ի թատերս, ի խաղս, յաղանդառութիւն ի ծաղրածութիւն, ի լրբութիւն և յայլ ամենայն չարիս։ Քանզի քահանայն որ է գլուխ ժողովրդեանն և հովի բանաւոր հօտին Քրիստոսի, փոխանակ այնն որ առաւել քան զայլ առորսն պարտ էր յեկեղեցի դիմել, պատարագ մատուցանել, զիաղորդն փոխել, զոր չէ պարտ ըստ կանոնաց սուրբ հարցը՝ քան զորթօրն յառաջ անցանել առանց փոխելոյ փրկակամ\*\* հաղորդութեանն, այլ յամենայն կիրակէի հորոգել զժողովորդն, խոստովանեցուցանել, և հաղորդել և պատուէր տալ յատոր կիրակէի առաւել զաղքասս կերակրել և գրանդեալս տեսանել և զօտարս ժողովել, զիիրս. սիրով ընդունել և զամենայն բարեգործութիւնս փութանակի կատարել, որով հաճի Աստուծ և զիմնդրուածն կատարէ։ Իսկ փոխանակ այսորիկ զի՞նց գործէ քահանայն յատոր կիրակէի։ Առաջի ժողովրդեանն անցեալ, առաջնորդէ ի կրպակաւորսն և ի վաճառափողոցն ի ստախօսութիւն, ի զրկանս, յարքեցութիւն և յամենայն մեղաց տեսակս, որովք առաւելապէս բարկացուցանեն զԱստուծ և ի ցաստմն շարժեն ի վերայ արարածոց։ Եւ այս ամենայն և սոցին նմանս ի ծուլութենէ առաջնորդաց և յանփոյթ առնելոյ զկորուստ բազմացն։ Զի յորժամ հովիսէ գահավիծի, հօտքն անտերունչք շրջին։ Եւ երբ զօրաւարք ի կապան ըմբռնի ի թշնամեաց, զօրքն ո՞րպիսի վշոօք ոչ տանջեսցին և յանդունու խորոց ընկդիմցին։ Վասն այսորիկ եղև քահանայն, իբրև զմի ի ժողովրդենէն և ուսուցին իբրև զուսանոշն և կամ ևս վատթարագոյն։

Նաև այլ քրիստոնեայ ոչ թէ ամենայնի ազատ են յայսմ պարսաւանաց, այլ ոմն այսպէս և ոմն այսպէս և նորա գթեսցեն ի ճշմարտէն։ Եւ յոյնք աւելի և յայն սխալեն, զի գիտութեամբ մեղանշեն և ամբար-

<sup>37</sup> Մատթ. Ե 28:

\* Զեռագրում՝ տոսցոր։

<sup>38</sup> Մատթ. Ե. 22:

\*\* Զեռագրում՝ փրկանակ։

տառանութեամբ ընդդէմ հակառակին ճշմարտութեանն և զառաքելականն չրել շանան զբանան և զոր գիտեն որ սուս են, հնարին իրաւանալ:

Այլ դու զգոյշ լեր Գրիգորիէ, որ յապս աշխատանս զմեզ հարկեցեր, գուցէ գթեսցես, զի ամենայն բան երկին է ըստ մեծի աստուածաբանի և երկու շատօք ընթանայ: Եւ այլ է վերին երեսնին, և այլ խորին միտք խորհրդոցն, յոր թէ ոչ ոք սսուգի հասցէ ի վերայ գայթագոլի: Դարձեալ ասեմ զգոյշ լեր:

Բազում ինչ կամէի գրել, այլ վասն անպարապութեան ոչ զարեցի սակայն եռակի գրեմ՝ զգոյշ լեր, զի մի գայթակղեսցիս:

